

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2012 թվականի ապրիլի 10-ին Նոր Խարբերդի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Կ. Կակոյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Գ. Աբրահամյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ասատրյանը, ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի, նրաժշտական և հանրակրթական դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները, համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ- Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ղեկավար Կ. Կակոյանի հաշվետվությունը 2011 թվականի ներկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ

2011 թվականի ներկրորդ կիսամյակի ընթացքում Նոր Խարբերդի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 200 դիմում, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 3500 տեղեկանք, ստացել 40-ից ավելի պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2011 թվականի ներկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սանմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները: Շաբաթը նրկու անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման, սահմանների ճշտգրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել թունաքիմիկատներ:

2011 թվականի ներկրորդ կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ՝ 2201.3 հազար դրամ.

բ/ գույքահարկ՝ 5889.7 հազար դրամ.

գ/ տնդական տուրք՝ 999.4 հազար դրամ.

դ/ ոչ հարկային եկամուտներ՝ 1134.8 հազար դրամ:

Համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

հանդիսավորությանը նշվել է հուլիսի 5-ը՝ Մահմանադրության օրը, սեպտեմբերի 21-ը՝

Անկախության հռչակման օրը:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 790.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն.

Նուդարկավորության նպաստ՝ 1550.0 հազար դրամ.

Համայնքում նախատարրական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 10200.0 հազար դրամ.

Երաժշտական դպրոցին 4523.0 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է՝ 2800.0 հազար դրամ.

Բարեկարգվել և մասնակի ասֆալտապատվել են համայնքի կենտրոնական, «Զոնալ» թաղամասի փողոցների որոշակի հատվածներ, գազի ֆիկացվել է 20-րդ փողոցը:

2012 թվականի 1-ին կիսամյակում նախատեսված է գազի ֆիկացնել նոր թաղամասի 4 փողոց:

Համայնքի հիմնախնդիրներից է գյուղամիջյան ճանապարհների բարեկարգումը, խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերի վերանորոգումը, նոր թաղամասերում էլեկտրական ենթակայանների տնդադրումը:

Ընթացքում են բուժամբույատորիայի շենքի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՆԱԿԵԼԻՑ



Կ. ԿԱԿՈՅԱՆ